

Միջազգային զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտների վերհանումը և դրանց լուծման ուղիների նախանշումը ՀՀ-ում

Մեջլումյան Շոգիկ Ս.

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ
shogikmejlumyan2022@gmail.com

ՀՏԳ՝ 338; EDN: WROEMJ; JEL: D41, L83, Z30, Z32, Z38

DOI: 10.58587/18292437-2024.1-172

Հանգուցաբառեր՝ միջազգային զբոսաշրջություն, զարգացման հնարավորություններ, խոչընդոտներ, մրցունակություն

Основные препятствия на пути развития международного туризма и пути их решения в РА

Меджлумян Шогик С.

Аспирант факультета экономики и менеджмента, ЕГУ (Ереван, РА)

Аннотация. Современные вызовы развития мировой экономики, а также сложившаяся социально-экономическая ситуация в Армении делают актуальной и важной необходимость содействия конкурентоспособности экономики страны. В связи с этим развитие международного туризма может стать ключевым компонентом повышения конкурентоспособности экономики Армении, учитывая тот факт, что до распространения пандемии COVID-19 туризм был одной из динамично развивающихся и перспективных отраслей экономики Армении. В этом контексте существует ряд препятствий и проблем, а также благоприятных условий для развития международного туризма в Армении. Таким образом, ряд объективных и субъективных причин, зафиксированных на протяжении многих лет, препятствовал развитию туристического сектора в Армении и его возможностям интернационализации. С другой стороны, богатое историческое и культурное наследие, разнообразие географического рельефа, богатая природная среда, возможность выступать транзитной страной в направлениях запад-восток и юг-север, уникальная культура и многие другие факторы являются прекрасными ресурсами для эффективно реализовать туристический потенциал страны. В этом контексте выявление основных факторов, препятствующих развитию международного туризма в Армении, а также представление возможностей, способствующих развитию отрасли, является основной целью данной статьи.

Ключевые слова: международный туризм, препятствия, возможности для развития, конкурентоспособность

Main Obstacles to the Development of International Tourism and Ways to Solution Them in RA

Mejlumyan Shogik S.

PhD students in the Faculty of Economics and Management, ESU (Yerevan, RA)

Abstract. The contemporary challenges in the global economy, coupled with the current socio-economic landscape in Armenia, underscore the critical need to enhance the competitiveness of the country's economy. In this context, the promotion of international tourism emerges as a pivotal element in bolstering Armenia's economic competitiveness. Historically, tourism was a rapidly advancing and promising sector in Armenia until the onset of the COVID-19 pandemic.

Despite its potential, the development of international tourism in Armenia faces a spectrum of challenges and opportunities. Over the years, both objective and subjective factors have impeded the growth of the tourism sector and its global integration. Conversely, Armenia boasts a wealth of assets, including a profound historical and cultural heritage, diverse geographical terrain, a rich natural environment, strategic transit capabilities connecting west-east and south-north directions, a unique culture, and various other elements that position it as a country with immense tourism potential.

The primary objective of this article is to pinpoint the key impediments thwarting the progress of international tourism in Armenia while concurrently highlighting the opportunities that can propel the industry forward. By discerning these factors, stakeholders can strategically address challenges and leverage the inherent advantages, paving the way for the optimal realization of Armenia's tourism potential.

Keywords: international tourism, obstacles, opportunities for development, competitiveness

Միջազգային զբոսաշրջության արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը Հայաստանի տնտեսության զարգացման կարևորագույն «ոլկոմոտիվներից» է: Իհարկե, անհրա-

ժեշտ է արձանագրել, որ միջազգային զբոսաշրջությունը բավական բարդ սոցիալ-տնտեսական համակարգ է, որտեղ առկա են մի շարք փոխկապվածություններ: Զբոսաշրջային ոլորտը

ներդրումային հոսքերի ներգրավման կարևորագույն աղբյուրներից է, որի շնորհիվ հնարավոր է նվազեցնել երկրում առկա գործազրկության մակարդակը, ապահովել բնակչության եկամուտների աճ, ինչպես նաև համարել պետական բյուջեի եկամտային մասը:

Միջազգային զբոսաշրջության զարգացումը խոչընդոտող սոցիալ-տնտեսական խնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը, որպես փոքր և ծովային ելք չունեցող երկիր, բախվում է զգալի տնտեսական սահմանափակումների, որոնք ուղղակիորեն ազդում են զբոսաշրջության ոլորտի զարգացման մեջ էական ներդրումներ կատարելու՝ երկրի կարողությունների վրա: Սա արտացոլվում է հատկապես Հայաստանում զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված պետական բյուջեի հատկացումների մեջ:

Այսպես, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ամեն տարի հրապարակում է զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների ժամանակացույցը և դրանց իրականացման համար հատկացվելիք գումարների նախահաշիվը: 2023 թվականի ընթացքում նախատեսվում է, որ ՀՀ պետական բյուջեից հատկացումները զբոսաշրջության զարգացման համար կազմելու են 880,650 հազար ՀՀ դրամ (առանց ավելացված հարկի), որի 55.3%-ն ուղղված է լինելու զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային և խթանման գործընթացին, 26.5%-ը՝ հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն, փայթեթավորմանն ու խթանմանը, 11.4%-ը՝ միջազգային համագործակցությանը, 6%-ը՝ ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացմանը, իսկ մնացած 0.9%-ը զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավման և սպասարկման հետ կապված ծառայությունների ձեռքբերմանը: Ընդ որում, նախատեսվում է, որ 2023 թվականին զբոսաշրջության զարգացմանն ուղղությամբ իրականացնելու է 18 միջոցառում [5]: Այդուհանդերձ, խնդիրը կայանում է նրանում, որ չնայած ամեն տարի հրապարակվող զբոսաշրջության զարգացման ծրագրերին, չկա որևէ հաշվետվություն, որն արտացոլում է այդ ծրագրերի իրականացման արդյունքները: Ստացվում է, որ անհնար է դառնում գնահատել առանց այդ էլ սահմանափակ ֆինանսական ռեսուրսների ներդրման արդյունավետությունը, իսկ մյուս կողմից բացակայում է ոլորտում ծախսվող պետական միջոցների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Ընդհանուր առմամբ, զբոսաշրջության ոլորտում վարվող վիճակագրությունը հնարավորություն չի տալիս իրավիճակի խորքային և համապարփակ գնահատականներ տալ, վեր հանել խնդիրներն ու

ըստ դրանց լուծման համապատասխան ուղիներ նախասահմանել:

Դեռևս 2003 թվականին ընդունվել է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, որով զբոսաշրջությունը ճանաչվել է որպես տնտեսության գերակա ճյուղ [1], սակայն մինչև այս պահը Հայաստանի զբոսաշրջային ներուժը բավականաչափ բացահայտված, գույքագրված և օգտագործված չէ, ինչը պայմանավորված է, առաջին հերթին, այս ուղղությամբ անհրաժեշտ պետական արդյունավետ ու թիրախային քաղաքականության բացակայությամբ: Միակ վիճակագրական տվյալները, որով հնարավոր է գնահատել զբոսաշրջության ոլորտում վարվող պետական քաղաքականության արդյունավետությունը զբոսաշրջային այցելություններն արտացոլող ցուցանիշներն են, որոնք շատ մակերեսային են ներկայացնում իրավիճակը: Հայաստանի տնտեսության համար գերակա ճյուղ ճանաչված այս ոլորտի համար նման մոտեցումն արդյունավետ համար չի կարելի:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում [6] ընդամենը մեկ էջի սահմաններում ներկայացված է ոլորտի զարգացման տեսլականը՝ բավական հավակնոտ թիրախներով: Այսպես, նախատեսվում է մինչև 2026 թվականը միջազգային այցելությունների թիվը հասցնել 2.5 միլիոնի, ինչը 47%-ով ավել է 2022 թվականի փաստացի ցուցանիշից: Սակայն մյուս կողմից, զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության ինչպես նպատակները, այնպես էլ դրանց հասնելու ուղղությամբ նախատեսվող աշատանքները չափազանց վերացական են:


2019 թվականի նոյեմբերին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակվել է նաև «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030» փաստաթուղթը [8], որով Հայաստանի կառավարությունը ձգտում է հատակեցնել զբոսաշրջության ոլորտի տեսլականը և հեռանկարները՝ սահմանելով զբոսաշրջության ոլորտի առաջնահերթություններն ու սոցիալ-տնտեսական զարգացման ամբողջական մոտեցումը 2020-2030 թվականների ընթացքում: Մեր կարծիքով, սակայն, ռազմավարության մեջ մի շարք խնդիրներ բարդացնելու են նախատեսվող տասը տարիների ընթացքում ըստ դրա միջոցառումների ծրագրերի մշակումն ու դրանց իրականացումը: Առաջին հերթին, ճիշտ չէ ընտրված ռազմավարության մշակման մեթոդաբանությունը: 800 զբոսաշրջիկների հարցումների պատասխանների վերլուծության արդյունքում Հայաստանի՝ հաջորդող տասը

տարիների զբոսաշրջության ոլորտի ռազմավարության մշակումը չի կարող արտացոլել ոլորտի իրական առաջնահերթությունները:

Բացի այդ, ռազմավարությունը կյանքի կոչելու և այն որպես հերթական փաստաթուղթ չթողնելու առանցքային նախապայման է դրա մշակման ընթացքում առավելագույն մասնակցայնության ապահովումը: Թեև Չբոսաշրջության կոմիտեի կողմից մշակվել է ամբողջ Հայաստանի տարածքում զբոսաշրջության զարգացման ռազմավարական փաստաթուղթ, բայց ոչ մի խոսք չկա մշակման փուլում մարզերում ապրող մարդկանց, մասնագետների ու փորձագետների ներգրավվածության մասին, որոնց մասնագիտական գիտելիքներն ու մարդկային ռեսուրսները վստահաբար կարող են ծառայել այս փաստաթուղթն առավել նպատակային ու կիրառելի դարձնելուն: Ինչպես և կառավարության ծրագրում, այնպես էլ այս ռազմավարության մեջ սահմանված նպատակ-

ները չափելի ու առարկայական չեն, իսկ այն թիրախները, որոնք սահմանված են (օրինակ՝ մինչև 2023 թվականը միջազգային այցելությունների թիվը հասցնել 7 միլիոնի), ավելի, քան անիրատեսական են: Համաձայն ռազմավարությամբ սահմանված թիրախներից մեկի՝ նախատեսվում է, որ 2030 թվականին ՀՆԱ-ի ուղղակի ներդրումը զբոսաշրջության ոլորտում կազմելու է 1.6 մլրդ ԱՄՆ դոլար: Չբոսաշրջության և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող 2010-2021 թվականների ընթացքում զբոսաշրջության և ճանապարհորդության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում կազմել է միջինը 11.3%: Ընդ որում, մինչև համավարակային ժամանակահատվածում՝ 2019 թվականին, այդ ցուցանիշը կազմել է 1811,4 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2021 թվականին նվազել է մոտ 52 %-ով՝ կազմելով 880,5 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 6.1%-ը:

Պճապատկեր 1. Չբոսաշրջության և ճանապարհորդության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում և փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, 2010-2021 թթ. (%)



Համաձայն Չբոսաշրջության և ճանապարհորդության համաշխարհային խորհրդի տվյալների՝ միջազգային զբոսաշրջային ծախսերը Հայաստանում 2019 թվականին կազմել են 1.5 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2021 թվականին ցուցանիշը նվազել է մոտ 59%-ով՝ կազմելով 614,7 մլն ԱՄՆ դոլար [27]: Համաձայն Հայաստանի զբոսաշրջության ռազմավարության սահմանած թիրախի՝ 2030 թվականին զբոսաշրջային ծախսերը նախատեսվում է հասցնել 4 մլրդ ԱՄՆ դոլարի, այսինքն, մոտ 7 անգամ ավել, քան 2021 թվականի փաստացի ցուցանիշն է:

Ինչպես հայտնի է, զբոսաշրջության ոլորտը երկրի համաչափ տարածքային զարգացման կարևորագույն գործիքներից է: Սակայն Հայաստանի պարագայում այստեղ ևս առկա են մի շարք խնդիրներ: Ինչպես ցույց է տվել մեր կողմից իրականացված վերլուծությունը, միջազ-

գային զբոսաշրջային հոսքերը հիմնականում կենտրոնացած են Երևանում՝ պայմանավորված նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների (հյուրանոցային և սննդի օբյեկտներ, թանգարաններ, այլ մշակութային վայրեր և այլն) Երևանում տեղակայման հետ: Սա, իհարկե, պայմանավորված է նաև Հայաստանում ճանապարհային ենթակառուցվածքների թույլ զարգացվածությամբ: Դեռևս 2019 թվականին Համաշխարհային բակը գնահատել է, որ Հայաստանի ճանապարհների 40%-ը շարունակում են մնալ անբարեկարգ վիճակում, ինչը Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացման համար առանցքային խոչընդոտ է: Հայաստանի զբոսաշրջային ներուժի բացահայտումը ցույց է տալիս, որ երկրի պատմամշակութային ժառանգության հիմնական օբյեկտները, որոնք կարող են միջազգային

գրոսաշրջային գրավչության կենտրոններ դառնալ, հաճախ գտնվում են միջպետական ճանապարհներից բավական հեռու, ուստի, այստեղ խնդիր է շարունակում մնալ տեղական նշանակության ճանապարհների վերանորոգման ցածր տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ:

Հայաստանի հասանելիությունը համաշխարհային գրոսաշրջային շուկայում բարձրացնելուն խոչընդոտող գործոններից են նաև դեպի Հայաստանի օդային տրանսպորտի բավական բարձր գներն ու թռիչքների անհարմար ժամանակացույցը: Այսպես, Հայաստանից դեպի եվրոպական մի շարք երկրների քաղաքներ թռիչքներ է իրականացնում Wizzair բյուջետային ավիաընկերությունը, որի գները կարող են սկսել 24.99 եվրոյից, սակայն թռիչքների հիմնական մեկնումները գիշերային ժամերին են: 2021 թվականի հուլիսի 14-ին Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի և Էյր Արաբիա ընկերության միջև ստորագրվել է հայկական նոր ազգային ավիաընկերության ստեղծման վերաբերյալ համաձայնագիր, որն անվանվել է «Ֆլայ Արնա»: «Ֆլայ Արնա»-ի նախատեսվող թռիչքների ուղղություններն են՝ Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Իրան, Վրաստան և Հնդկաստան: Ընդհանուր առմամբ, օդային տրանսպորտի զարգացումը և Հայաստան մուտքի վիզաների ազատականացումը գրոսաշրջության ոլորտի զարգացումը խոչընդոտող լրջագույն մարտահրավերներից են: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանը ծովային ելք չունեցող երկիր է, իսկ չորս հարևան երկրներից երկուսի հետ (Թուրքիա և Ադրբեջան) սահմանները փակ են, օդային տրանսպորտի զարգացման հեռանկարները Հայաստանում խիստ օրակարգային են դառնում:

ՀՀ մուտքի վիզաների ազատականացման ուղղությամբ իրականացված բարեհաջող քայլ կարելի է համար Չինաստանի հետ սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին 2019 թվականի համաձայնագիրը [9]: Այս համաձայնագրի ստորագրմամբ և համապատասխան թիրախային ծրագրերի իրականացմամբ՝ Չինաստանից գրոսաշրջային հոսքերը դեպի Հայաստան կարող են զգալիորեն ավելանալ: Իսկ ընդհանուր առմամբ, ՀՀ մուտքի արտոնագրի պահանջից ազատված են 44 երկրների քաղաքացիներ:

Հայաստանի գրոսաշրջության զարգացման տեսանկյունից բավական լուրջ խնդիր է նաև ոլորտում տատանումները՝ սեզոնայնությամբ պայմանավորված: Մեր կողմից իրականացրած հարցումները ՀՀ մի շարք մարզերում գործող հյուրատների ու հյուրանոցային օբյեկտների տնօրինողների շրջանում ցույց են տալիս, որ

հիմնական գործունեության ամիսները մայիսից-սեպտեմբեր ժամանահատվածն է, իսկ մնացած ամիսներն ավելի պասիվ են, իսկ դրանով պայմանավորված ֆինանսական կորուստներն՝ անխուսափելի: Այսպիսի սեզոնային անհավասարակշռությունը կարող է հանգեցնել գերարտադրողականության՝ պիկ ժամանակաշրջաններում և գրոսաշրջային ռեսուրսների թերօգտագործման՝ սեզոնից դուրս: Այս խնդիրը հնարավոր է լուծել առաջարկվող գրոսաշրջային ծառայությունների դիվերսիֆիկացմամբ, ինչպես նաև ձմեռային շրջանի գրոսաշրջային հանգստի նոր փաթեթների մշակմամբ:

Հայաստանի գրոսաշրջության ոլորտի միջազգայնացման աշխարհաքաղաքական խոչընդոտներից է հարևան Ադրբեջանի հետ ընթացիկ հակամարտությունը՝ Արցախի հայաթափման և Հայաստանի սահմանների անձեռնմխելիության հետ կապված: Հարևան երկրների, մասնավորապես՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանները սահմանափակում են մուտքը դեպի Հայաստան և խոչընդոտում են անդրսահմանային գրոսաշրջության հնարավորությունները: Այս փակ սահմանները նաև սահմանափակում են գրոսաշրջության զարգացման ոլորտում տարածաշրջանային համագործակցության ներուժը:

Միջազգային գրոսաշրջային հոսքերի ընդլայնման մշակութային խոչընդոտներից է լեզվական սահմանափակումները: Հատկապես համայնքներում հայերենի տարածվածությունը որպես հաղորդակցության հիմնական միջոց կարող է մարտահրավերներ առաջացնել միջազգային գրոսաշրջիկների համար, ովքեր չեն տիրապետում հայերենին կամ ռուսերենին: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ միջազգային գրոսաշրջային հոսքերի ավելացման տեսանկյունից կարևոր է նաև սննդի տարբեր նախապատվություններ ունեցող մարդկանց համար առաջարկներ ունենալը (ինչպիսիք են բուսակերների կամ վեգանների նախասիրությունները): Ընդհանրացնելով նշենք, որ այս խնդիրները կարելի է համակարգել գրոսաշրջության ոլորտում ներգրավված մարդկային ռեսուրսների թույլ զարգացվածության մեջ, ինչի ուղղությամբ ևս անհրաժեշտ են հստակ ջանքեր ու վերապատրաստման ծրագրեր իրականացնել:

Չրոսաշրջության ոլորտի կայուն զարգացումը Հայաստանի համար ենթադրում է համալիր մոտեցում, որի ընթացքում անհրաժեշտ է գործարկել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային գրոսաշրջային կարիքների ու պահանջների բավարարման համաչափ ու արդյունավետ գործիքակազմ, ենթակառուցվածքներ և կարգավորման ինստիտուտներ: Հայաստանի գրոսաշրջային ներուժի ամբողջական իրացման և զարգացման հնարավորու-

թյունների բացահայտման համար, առաջին հերթին, մեծ կարևորություն է ստանում այդ ներուժի համապարփակ գնահատումն ու ըստ դրա զարգացման ուղիների կանխորոշումը: Հայաստանում միջազգային զբոսաշրջության ներուժի գնահատման դեպքում հնարավոր է դառնում առանձնացնել հիմնական զբոսաշրջային ուղղությունները, որոնք կարող են երկարաժամկետ և կայուն զարգացման միտումներ դրսևորել՝ դիրքավորելով Հայաստանը միջազգային շուկաներում: Այս առումով, Հայաստանում հատկորեն ուրվագծվում է պատմամշակութային, գյուղական, առողջարանային, կրոնական և էկոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Հայաստանի պատմամշակութային ներուժի գնահատումը ցույց է տալիս, որ այն հատկապես արտացոլվում է երկրի մշակութային ժառանգության մեջ: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանման մշակութային ժառանգությունը ոչ նյութական և նյութական անշարժ ու շարժական ժառանգություն է, որպես համապատասխան արժեքների ամբողջություն, որը կրում է պատմական հիշողություն ու ազգային ինքնություն և ունի գիտական կամ մշակութային նշանակություն [26]:

Այսպես, համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների՝ թանգարանները մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման և տարածման առանցքային կառույցներ են, որոնք այսօր վերանում են նաև կարևոր կրթական-սոցիալական հարթակների՝ ընդլայնելով իրենց դերը հանրության զարգացման և առողջ հասարակության ձևավորման գործում: Թանգարանային զբոսաշրջությունը, որը մշակութային զբոսաշրջության բաղկացուցիչ մաս է, բավական լայն տարածում ունի ամբողջ աշխարհում: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թվականին Հայաստանում գործել են 100 թանգարաններ, որոնցից 63-ը՝ Երևանում [10]: Ընդ որում, 2015 թվականի համեմատ 2022 թվականին թանգարան այցելությունների թիվն աճել է 13.6%-ով՝ կազմելով 1.9 մլն այց: Մյուս կողմից, դիտարկվող 2015-2022 թվականների ընթացքում թանգարան այցելությունների միջինը 90%-ը կենտոնացած է եղել Երևանում, ինչը, ի հավելումն նաև թանգարանների կենտրոնացվածությանը Երևանում, Հայաստանի ողջ տարածքում զբոսաշրջային համաչափ զարգացման համար բավական լուրջ մարտահրավեր է: Թանգարանային մշակույթի զարգացումը Հայաստանի համար միջազգային զբոսաշրջության կարևոր նախապայմաններից է, ինչը հնարավորություն է տալիս ցույց տալու երկրի հարուստ պատմամշակութային ժառանգությունը, ավելի խորքային պատկերացումներ

կազմելու հայկական հնագույն քաղաքակրթությունների, կրոնական ժառանգության և ժամանակակից զարգացումների մասին:

Հայաստանում պատմամշակութային զբոսաշրջության զարգացման հաջորդ կարևոր բաղադրիչը Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձաններն են ու դրանց պահպանությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում ներառված են Հաղպատի և Սանահինի (1996 թ.), Գեղարդի (2000 թ.) վանական համալիրները, Էջմիածնի եկեղեցիները և Մայր տաճարը, Չվարթնոցի հնագիտական տաճարը (2000 թ.) [19]: Իսկ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տվյալների՝ 2020 թվականի դրությամբ ՀՀ-ում եղել են 24225 պատմամշակութային հուշարձաններ [3]:

Մշակութային զբոսաշրջության զարգացման հաջորդ բաղադրիչը ոչ մշակութային ժառանգության քարտեզագրումն է և որպես զբոսաշրջային ծառայություն առևտրայնացումը: 2009 թվականի հոկտեմբերի 7-ին ընդունված «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքը [12] կարգավորում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գործընթացների ընթացքում ծագող իրավահարաբերությունները՝ ներառյալ ոչ նյութական մշակութային արժեքների գույքագրման, ցանկերի պատրաստման, նույնականացման, փաստաթղթավորման, հետազոտման, կիրառման, վերականգնման գործընթացները, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության պահպանման, միջազգային մշակութային համագործակցության, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների ժողովուրդների մշակութային հաղորդակցման խնդիրները, սահմանում է այդ ոլորտում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական մարմինների իրավասությունները: Մինչև այդ՝ 2006 թվականին, Հայաստանն վավերացրել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան [13]: ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշմամբ հաստատվել է նաև ՀՀ ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը, որտեղ ընդգրկվել են 51 արժեքներ:

Հաշվի առնելով Հայաստանի պատմամշակութային հարուստ ժառանգությունը (այդ թվում՝ նյութական ու ոչ նյութական արժեքները), հստակ կարելի է արձանագրել, որ Հայաս-

տանի միջազգային զբոսաշրջային ներուժն այս ուղղությամբ կարելի է համարել ոչ ամբողջապես իրացված: Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացման ուղղություններով անհրաժեշտ են կոնկրետ ու առարկայական քայլեր: Մասնավորապես, նշանակալի է նյութական մշակութային արժեքների պահպանմանն ու վերականգնմանը հատկացվող միջոցների ծավալների ավելացման անհրաժեշտությունը: Բացի այդ, ոչ նյութական մշակութային արժեքների առևտրայացման համար մեծ կարևորություն ունի դրանց «վերակենդանացմանն» ուղղված ակտիվ միջոցառումների իրականացումը, որոնք կարող են դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջային հոսքերի խթան հանդիսանալ: Այս առումով, բավական հետաքրքիր մոտեցում է մշակութային օրացույցի մշակումը Հայաստանի համար, որտեղ կարող են ներառվել կազմակերպվող փառատոնները, ներկայացումները, ցուցահանդեսներն ու այլ մշակութային իրադարձությունները առաջիկա տարվա ընթացքում: Սա միջազգային զբոսաշրջիկներին հնարավորություն կտանախապես իրազեկվել և ըստ իրենց հետաքրքրող ուղղությունների զբոսաշրջային ուղևորություն ծրագրել Հայաստան:

Մեծ կարևորություն ունի միջազգային զբոսաշրջիկներին Հայաստանի պատմամշակութային ժառանգության մասնակից դարձնելը: Սա հնարավոր է իրականացնել նրանց համար վարպետության դասերի կազմակերպմամբ, որտեղ նրանք կարող են սովորել հայկական ավանդական խոհանոցի գաղնիքներն ու պատրաստել ուտեստներ, մասնակցել լավաշի պատրաստման գործընթացին, արհեստանոցներում պատրաստել տարատեսակ արվեստի գործեր (կավից հուշանվերներ, փոքրիկ խաչքարեր և այլն), սովորել հայկական ավանդական պարեր և այլն: Սա Հայաստանի պատմամշակութային հարուստ ժառանգությունը միջազգային զբոսաշրջիկներին մատուցելու նորարարական մոտեցում է, ինչը խթանում է նաև Հայաստանի տարբեր համայնքներում տնտեսական ակտիվությունը, եկամուտների ու զբաղվածության աճը: Հայաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությունը, բնությունն ու մարդիկ իրական «ակտիվներ» են՝ ոլորտի միջազգային մրցունակության բարձրացման համար: Այս ուղղությամբ պետական արդյունավետ քաղաքականության դերը թերագնահատել չի կարելի, իսկ զբոսաշրջային ներուժի քարտեզագրումն ու համապատասխան գործողությունների ծրագրերի ու միջոցառումների մշակումը և իրականացումը օրակարգային հարց է ոլորտի կայուն զարգացման համար: Այս առումով, Հայաստանի միջազգային զբոսաշրջության զարգացման հայեցակարգային մոտեցում-

ներն անհրաժեշտ է կոնկրետացնել և թիրախավորել:

Հայաստանի զբոսաշրջության զարգացման կարևորագույն ուղղություն է մեր երկրի պատմամշակութային ժառանգության թվայնացումը: Այս առումով, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են Հայաստանի զբոսաշրջային ծառայությունների ներկայացման և միջազգային շուկաներում դիրքավորման առարկայական գործիքներ դառնալ: Հայաստան այցելած միջազգային զբոսաշրջիկները լրացված և վիրտուալ իրականության միջոցով կարող են բացահայտել մեր բազմադարյա պատմության ակունքները, իրադարձություններն ու դեպքերը՝ տեղափոխվելով Հայաստանի պատմության տարբեր դարաշրջաններ: Սա նաև զբոսաշրջիկների համար պատմամշակութային ժառանգության հետ հուզական կապվածություն ստեղծելու հետաքրքիր մոտեցում է, ինչն առավել արդիական է հայկական սփյուռքից մեծ թվով զբոսաշրջիկներ ներգրավելու համար: Հայաստանի զբոսաշրջային ներուժի ամբողջական իրացումն առանց ժամանակակից տեխնոլոգիաների անհնար է լինելու:

Հայաստանում միջազգային զբոսաշրջության զարգացման տեսանկյունից բավական կենսունակ ուղղություն է նաև գյուղական և էկոզբոսաշրջությունը, որոնք զբոսաշրջիկներին հնարավորություն են տալիս տեսնել գյուղերում ապրող մարդկանց կենցաղն ու ավանդույթները: Հայկական ազգային ավանդույթները, կոլորիտային միջավայրը զբոսաշրջային տպավորությունների հիմնական ռեսուրսներն են, որոնց հիմնական կրողները հատկապես փոքր քաղաքներն ու գյուղերն են: Սա նաև Հայաստանի տարածքային համաչափ զարգացման և մարզերում տնտեսական կյանքի ակտիվացման իրական հնարավորություններ է ստեղծում՝ կրճատելով աղքատությունը, ապահովելով զբաղվածության ու եկամուտների աճ և կանխելով միգրացիան: Հաշվի առնելով Հայաստանի յուրահատուկ բնությունն ու մշակութային ժառանգությունը՝ անհրաժեշտ է մշակել հայկական էկոզբոսաշրջության զարգացման հստակ սխեմաներ՝ դրանք գույակցելով ենթակառուցվածքների զարգացմամբ և մատուցվող զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավմամբ:

Հայաստանում առողջարանային զբոսաշրջության զարգացման հնարավորությունների սկիզբը դրվել է դեռևս խորհրդային տարիներին, երբ ստեղծվեցին Ջերմուկի ու Արզնու առողջարանային գոտիները: Հայաստանը հայտնի է իր հանքային ջրերի մեծ պաշարներով: Այսպես, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2021 թվականին Հայաստանում հանքային ջրերի ծավալները կազմել են 371.944

հազար իւմ.: Ըստ նպատակի հանքային ջրերի ծավալների օգտագործումը ցույց է տալիս, որ 2021 թվականին ընդամենը 0.8%-ն է օգտագործվել բուժման նպատակով: Ընդ որում, Լոռու մարզում հանքային ջրերի 94%-ն են օգտագործվում բուժման նպատակով, իսկ Կոտայքի մարզում՝ 1.4%-ը [11]: ՀՀ տարածքում հայտնի են հանքային ջրերի ավելի քան 700 աղբյուրներ և հորատանցքեր: Առավել հայտնի են Չերմուկի, Դիլիջանի, Արզնիի, Բջնիի, Լիճքի, Հանքավանի, Վանաձորի և այլ հանքային աղբյուրները, որոնցից մի քանիսի վրա հիմնվել և գործում են առողջարաններ [14]: Չանքային ջրերի բուժիչ հատկությունները առողջարանային զբոսաշրջության զարգացման կարևոր ռեսուրսներ են Հայաստանի համար: Առկա առողջարանային ենթակառուցվածքների միջազգային չափանիշներին համապատասխան արդիականացումն ու նորերի ստեղծումը կարող են միջազգային զբոսաշրջիկները համար առողջարանային զբոսաշրջության գրավչության կարևոր պայմաններ դառնալ:

Կրոնական զբոսաշրջությունը մասնագիտական գրականության մեջ համարվում է ոլորտի ամենահին ուղղություններից մեկը [25]՝ իրենից ներկայացնելով միջազգային զբոսաշրջության շուկայի նշանակալի, զարգացող և աճող հատված: Այն, որ Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն, իսկ հայկական վանքերն ու եկեղեցական համալիրները ունեն բազմադարյա պատմություն ու տեղակայված են Հայաստանի ամենագեղեցիկ վայրերում, Հայաստանում կրոնական զբոսաշրջության զարգացման ներուժը բավական հեռանկարային է դարձնում: Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության տվյալների՝ ՀՀ-ում առկա են 1475 եկեղեցի, 610 մատուռ, իսկ կրոնական կառույցների ընդհանուր թիվը 2444 է [5]: Այս ամենը առևտրայնացման ենթակա հսկայական զբոսաշրջային ռեսուրս է Հայաստանի համար, որը կարող է խթանել հատկապես ուխտագնացությունների մշակույթի զարգացումը Հայաստանում: Համաձայն մի շարք գնահատականների՝ քրիստոնյաների թիվն աշխարհում կազմում է 2.2 մլրդ մարդ, որն աշխարհի բնակչության 31%-ն է [20]: Դիրքավորվելով որպես հնադարյա քրիստոնեական երկիր՝ Հայաստանը կարող է դառնալ քրիստոնեական դավանանքը կրողների համար գրավիչ ուխտատեղի: Այս համատեքստում կարող են կիրառվել նաև վանական կացարանների կառուցման մոտեցումները, որտեղ կրոնական սովորույթներով ու մշակույթով ժամանակավոր բնակվելը կարող է միջազգային զբոսաշրջիկների համար հետաքրքիր ու գրավիչ առաջարկ լինել:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում դեռևս դիրքավորման և հայտնիության խնդիրներ ունի, մեծ կարևորություն է ստանում Հայաստանի զբոսաշրջային բրենդի ձևավորումն ու դրա տարածման ուղղությամբ մարքեթինգային արշավները: 2022 թ. մայիսի 23-ին ՀՀ զբոսաշրջության

կոմիտեն ներկայացրել է Հայաստանի զբոսաշրջային նոր բրենդը՝ «Armenia, The Hidden Track» («Հայաստան. թաքնված ուղի») կարգախոսով, որն, ըստ Կոմիտեի գնահատականների՝ մարմնավորում է բրենդի պատմությունն ու տեսողական ինքնությունը, հրավեր-նամակ է Հայաստանից՝ ուղղված աշխարհին: Մեր կարծիքով Հայաստանի նոր զբոսաշրջային բրենդը հաջողված համարել չի կարելի՝ հաշվի առնելով երաժշտության և տառատեսակների ոչ ճիշտ ընտրությունը, իսկ կարգախոսն, ինքն իրենով ոչինչ չի ասում Հայաստանի ինքնության կամ պատմության մասին:

Մյուս կողմից, հատկանշական է, որ ՀՀ զբոսաշրջության կոմիտեն վերջին տարիներին Հայաստանում զբոսաշրջության զարգացմանն ուղղված բավական ակտիվ գործունեություն է իրականացնում՝ հատկապես շեշտադրելով միջազգային փառատոների և միջոցառումների անցկացումը Հայաստանի մարզերում («Airfest» փառատոնը՝ Ստեփանավանում, «Արվեստների և արհեստների» միջազգային փառատոնը Դիլիջանում, «Պարապլաներային վայրէջքի ճշգրտության գավաթ» փառատոնը՝ Սևանում, «Summer Weekend in Jermuk»՝ Չերմուկում, «ՖԵՄՏԻՎԱՌ» երաժշտական փառատոնը՝ Վանաձորում, Գավառում և Սիսիանում, «Մշակույթ և բիզնես» փառատոնը՝ Մարտունիում, «Տարագֆեստ» փառատոնը՝ Երևանում և այլն): Հաշվի առնելով հատկապես ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում Հայաստանում բնակություն հաստատած ռուսների առկայությունը, նպանատիպ միջոցառումներն ու փառատոնները մեծ կարևորություն են ՀՀ զբոսաշրջային ոլորտի զարգացման համար:

Եզրակացություններ

Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտների և մարտահրավերների վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտի կայուն և շարունակական աճին խանգարում են Հայաստանի քիչ ճանաչվածությունը միջազգային զբոսաշրջային շուկաներում: Սա պայմանավորված է նրանով, որ երկրում դեռևս բավարար զարգացվածության աստիճանի չեն զբոսաշրջային ու սպասարկող ենթակառուցվածքները, պետական քաղաքականությունը նպատակային ու հասցեական չէ, Հայաստանը բավական լուրջ արտաքին աշխարհաքաղաքական խոչընդոտների է բախվում, իսկ ներքին միջավայրում հաճախ խանգարում են զբոսաշրջության ոլորտում ներգրավվածների մասնագիտական կարողությունների ու հմտությունների պակասը: Ի լրումն նրա, որ Հայաստանը ծովային ելք չունեցող երկիր է, իսկ ցամաքային չորս սահմաններից երկուսը փակ են՝ առկա է նաև օդային ուղևորափոխադրումների մրցակցության և աշխարհագրական դիվերսիֆիկացման խնդիր: Մյուս կողմից, Հայաստան մուտքի արտոնագրերի տրամադրման գործընթացների ուղղությամբ և սանհրաժեշտ են գործուն քայլեր, որոնք կարող են նպաստել մեխանիզմների դյուրացմանը: Այս ամենի արդյունքում Հայաստանի զբոսաշրջության

ուրտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում շարունակում է ցածր մնալ, իսկ ոլորտի տնտեսական ազդեցությունը հատկապես ՀՀ մարզերում և համայնքներում խիստ սահմանափակ է:

Չբոսաշրջության ոլորտում Հայաստանի պետական ակտիվ քաղաքականությունը ոլորտի կայուն և երկարաժամկետ զարգացման առանցքային «ոլոկոմոտիվը» կարող է դառնալ է: Առաջին հերթին, մեծ կարևորություն է ստանում զբոսաշրջության համապարփակ ռազմավարության մշակումը, որը պետք է կենտրոնացած լինի մշակութային ժառանգության պահպանման, կայուն զարգացման և Հայաստանի համայնքների ներգրավվածության վրա: Բացի այդ, առանցքային նշանակություն ունի մշակութային վայրերի և բնական լանդշաֆտների պահպանմանն ուղղված աշխատանքները, որոնք հնարավոր է իրականացնել մշակութային ժառանգության փորձագետների և բնապահպանների հետ համագործակցային ջանքերով մշակելով համապատասխան ծրագրերի և միջոցառումների միջոցով, որոնք ուղղված են լինելու այս ռեսուրսների պատմական և բնապահպանական ամբողջականության պաշտպանությանը: Հայաստանի միջազգային զբոսաշրջության զարգացման հիմնական նախապայման է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների բարելավումը, ներառյալ՝ ճանապարհները, նշանները, այցելուների կենտրոնները և կոյուղային ցանցը: Մյուս կողմից, պետական ակտիվ մասնակցության պետք է մշակվեն նաև համապատասխան բազմալեզու տեղեկատվական նյութեր, աուդիո ուղեցույցները և ինտերակտիվ ցուցանմուշները, որոնք զբոսաշրջային տպավորություններն առավել վստ ու տպավորիչ կդարձնեն:

Չբոսաշրջությունն, ինչպես արդեն նշվել է, համայնքային զարգացման համար հսկայական ներուժ է պարունակում, ուստի, այս առումով ևս պետական միջամտությունն ու վերահսկողությունը կարող է արդյունավետ դարձնել այդ ներուժի ամբողջական իրացումը: Հայաստանի տարբեր համայնքներում համապատասխան վերապատրաստման ծրագրերը կարող են զարգացնել համայնքի բնակիչների հմտություններն ու կարողությունները՝ էքսկուրսավարության, հյուրընկալության և հարակից այլ ոլորտներում: Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացումը ուղղակիորեն փոխակապակված է նաև շրջակա միջավայրի վրա, ուստի միջազգային զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականությունը Հայաստանում պետք է կառուցված լինի կայուն և պատասխանատու զբոսաշրջային ծառայությունների մատուցման շուրջ՝ խրախուսելով էկոլոգիապես մաքուր տրանսպորտային համակարգի զարգացումն և թափոնների տեսակավորման համա-

կարգերը: Հատկապես զարգացող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, որտեղ առկա է սահմանափակ բյուջեի արդյունավետ բաշխման շարունակական անհրաժեշտություն, միջազգային զբոսաշրջության զարգացման համար առանցքային նշանակություն ունի գործընկերային հարաբերությունների խթանումը մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ, ովքեր կարող են համապատասխան ներդրումների իրականացմամբ նպաստել Հայաստանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպես նաև իրականացնել համայնքային զարգացման ծրագրեր՝ երկարաժամկետ ֆինանսական կայունություն ապահովելու համար:

Հատկանշական է, որ Հայաստանի զբոսաշրջության զարգացման այս հեռանկարների տարանջատումն ըստ զբոսաշրջության տեսակների խիստ պայմանական է՝ հաշվի առնելով այն, որ զբոսաշրջության առանձին ուղղությունները սովորաբար միախառնված են ու միահյուսված: Իսկ պատմամշակութային զբոսաշրջության զարգացման կազմակերպումը տարատեսակ փառատոների և միջոցառումների միջոցով նպաստելու է նաև իրադարձային զբոսաշրջության զարգացմանը Հայաստանում: Ի վերջո, Հայաստանում միջազգային զբոսաշրջային ծառայությունների զարգացման, միջազգային զբոսաշրջային շուկայում դիրքավորման համար երկրի առկա ռեսուրսների ճիշտ քարտեզագրումն է, դրանց առևտրայնացման ուղղությամբ անհրաժեշտ ճիշտ պետական քաղաքականությունը՝ համապատասխան միջոցառումներով և մեխանիզմներով, որը Հայաստանի զբոսաշրջային ապագայի դուռը բացող միակ «բանալին» է:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Չբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 17.12.2023) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121640>
2. **Թովմասյան, Գ.**, «Թանգարանային զբոսաշրջության զարգացման միտումներն աշխարհում և Հայաստանում», «Ամբերդ» տեղեկագիր /2/, 2023, էջ 41 <https://asue.am/upload/files/amberd/2023-year5.pdf>
3. **Թովմասյան Գ.**, «ՀՀ մշակութային ժառանգությունը՝ որպես զբոսաշրջության զարգացման կարևոր գործոն», «Ամբերդ» տեղեկագիր, 2021/2 (9), էջ 37
4. **Թովմասյան Գ.**, «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր՝ Հայաստան. կրոնական զբոսաշրջության զարգացման ներուժը ՀՀ-ում», «Ամբերդ» տեղեկագիր /1/, 2023 թ., էջ 37

- <https://asue.am/upload/files/amberd/2023-year-1/4.pdf>
5. ՀՀ Էկոնոմիկայի նախարարի «2023 թվականի աջակցություն զբոսաշրջության զարգացման ծրագիրը, 2023 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» թիվ 2024-Ա հրաման (ընդունված 09.12.2022 թ.) <https://www.mineconomy.am/media/22553/Tourism%20%282%29.pdf>
 6. «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիր (2021-2026 թթ.)» (ընդունված 18.08.2021 թ.), էջ 38 <https://www.gov.am/files/docs/4586.pdf>
 7. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» 2010 թվականի 11 մարտի N 310-Ա որոշում (ընդունված 11.03.2010 թ.) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161418>
 8. «Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030», էջ 45, https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf
 9. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագիրը, http://www.parliament.am/draft_docs/7/K-340_hamadzaynagir.pdf
 10. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-մարտին», <https://armstat.am/am/?nid=81&id=2567>
 11. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականին», https://armstat.am/file/article/eco_book_2021_5.pdf (մոտք՝ 28.08.2023 թ.)
 12. «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք (ընդունված 07.10.2009 թ.) <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121003>
 13. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիա
 14. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պաշտոնական էջ՝ <https://geology.am/museum-mineral-water/> (մոտք՝ 28.08.2023թ.)
 15. **Кирьянова Л. Г.**, Маркетинг и брендинг туристских дестинаций: учебное пособие. Томский политехнический университет. – Томск.: Изд-во Томского политехнического университета, 2011, стр. 100-101.
 16. **Brida, J.G., Pereyra Barreiro, J.S., & Scuderi, R.**, (2017). Repeat tourism in Uruguay: modelling truncated distributions of count data, <http://ssrn.com/abstract=2017087>.
 17. Current world population, <https://www.worldometers.info/world-population/> (մոտք՝ 28.08.2023թ.)
 18. **Boboc, R.G.; Duguleană, M.; Voinea, G.-D.; Postelnicu, C.-C.; Popovici, D.-M.; Carrozzino, M.** Mobile Augmented Reality for Cultural Heritage: Following the Footsteps of Ovid among Different Locations in Europe. Sustainability 2019, 11, 1167.
 19. Properties inscribed on the World Heritage List, <http://whc.unesco.org/en/statesparties/am>
 20. Similarities and Differences, Netherlands Institute of International Relations “Clingendael”, October 2008, p. 4
 21. **Rauschnabel, P.A.; Felix, R.; Hinsch, C.; Shahab, H.; Alt, F.** What is XR? Towards a Framework for Augmented and Virtual Reality. Comput. Hum. Behav. 2022, 133, 107289
 22. **Rinschede, G.**, Forms of religious tourism. Annals of Tourism Research, 1992, 19(1), 51–67. [https://doi.org/10.1016/0160-7383\(92\)90106-Y](https://doi.org/10.1016/0160-7383(92)90106-Y)
 23. Salleh, S.Z.; Bushroa, A.R. Bibliometric and content analysis on publications in digitization technology implementation in cultural heritage for recent five years (2016–2021). Digit. Appl. Archaeol. Cult. Herit. 2022, 25, e00225.
 24. TPBO, Difference Between Destination Branding and Destination Marketing, 29 September 2015 <https://placebrandobserver.com/difference-between-destination-branding-and-destination-marketing/>
 25. Merchán, M.J.; Merchán, P.; Pérez, E. Good Practices in the Use of Augmented Reality for the Dissemination of Architectural Heritage of Rural Areas. Appl. Sci. 2021, 11, 2055
 26. UNESCO, Cultural Heritage Act, Article 2, point 1, https://en.unesco.org/sites/default/files/bulgaria_culturalheritageact_2009_entof.pdf
 27. World Travel & Tourism Council, ARMENIA, 2022 Annual Research: Key Highlights, https://wtcc.org/DesktopModules/MVC/FactSheets/pdf/704/61_20220613154142_Armenia2022_.pdf
- Տճանա/Հանձնվել է՝ 15.11.2023*
Рецензирована/Գրախոսվել է՝ 26.12.2023
Принята/Ընդունվել է՝ 05.01.2024